ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՖԻՆԱՆՍՆԵՐ

Հանրային ֆինանսներ կրթական ծրագիրը կազմվել է ՀՊՏՀ և ՀՀ ԿԲ փորձագիտական խմբերի համատեղ աշխատանքի շնորհիվ: Այս առումով կրթական ծրագրի վերջնարդյունքները, դասավանդվող առարկաները և դրանց կրթական ծրագրերը կառուցված են միջազգային առաջատար փորձին, ՀՀ հանրային կառավարման ոլորտի պահանջներին և զարգացման արդի միտումներին համապատասխան: Ուսումնառության ընթացքում կիրառվող մեթոդները, գիտելիքի գնահատման մեխանիզմները նպաստում են կրթական ծրագրի հիմնական վերջնարդյունքների ձեռքբերմանը: Հանրային ֆինանսներ կրթական ծրագիրի նպատակը ՀՀ պետական և համայնքային ֆինանսների զարգացմանը նպաստող որակյալ կադրերի և հետազոտողների պատրաստումն է:

Ծրագրի տևողությունը

1.5 տարի

Դասապրոցեսը

շաբաթական 3 անգամ
ժամը 18.20-ից

Ուսման վճարը (տարեկան)

700.000 ՀՀ դրամ

Որակավորում

տնտեսագիտության մագիստրոս

ԱՌԱՐԿԱՅԱՅԱՆԿ

առաջին կիսամյակ

Մոդուլ 1 (7 կրեդիտ)
1. Տեղեկատվական համակարգերը հանրային ֆինանսներում
2.Էկոնոմետրիկ մոդելավորում

Մոդուլ 2 (7 կրեդիտ)
1.Մակրոէկոնոմիկա - 3 (գիտահետ. աշխ.)
2.Պետական եկամուտների վերլուծություն և կանխատեսում

Մոդուլ 3 (8 կրեդիտ)
1.Հաշվապահական հաշվառումը ոչ առևտրային կազմակերպություններում
2.Պետական գնումների մեխանիզմը հանրային ֆինանսներում

Մոդուլ 4 (8 կրեդիտ)
1.Հանրային ֆինանսների զարգացման գերակա ուղղությունները
2.Հանրային ներդրումների վերլուծություն և կառավարում

երկրորդ կիսամյակ

Մոդուլ 5 (7 կրեդիտ)
1.Բյուջետային գործընթաց
2.Ծրագրային բյուջետավորման զարգացման գերակա ուղղությունները (գիտահետ. աշխ.)

Մոդուլ 6 (7 կրեդիտ)
1.Ֆինանսական ճգնաժամերի տեսություն
2.Ֆինանսական կայունությունը պետական ֆինանսական համակարգում (գիտահետ. աշխ.)

Մոդուլ 7 (8 կրեդիտ)
1.Ֆինանսական կառավարման հիմնախնդիրները պետական ֆինանսների համակարգում (գիտահետ. աշխ.)
2.Պետական պարտքի կառավարման ռազմավարությունը ՀՀ-ում

Մոդուլ 8 (8 կրեդիտ)
1.Հարկային քաղաքականության ռազմավարությունը ՀՀ-ում
2Հարկային և մաքսային վարչարարության հիմնախնդիրները ՀՀ-ում

երրորդ կիսամյակ

Մոդուլ 9 (6 կրեդիտ)
1.Բիզնես անգլերեն և հաղորդակցության հմտություններ
2.Գիտական հետազոտության մեթոդաբանություն

Մոդուլ 10 (4 կրեդիտ), ընտրովի առարկաներ
1.R ֆինանսների համար
2.Python ֆինանսների համար

Մոդուլ 11 (6 կրեդիտ)
Գիտահետազոտական փորձառություն

Մոդուլ 12 (14 կրեդիտ)
Մագիստրոսական թեզ

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Լևոն Վլադիմիրի Բարխուդարյան

Կրթական ծրագրի ղեկավար

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

տ.գ.թ. դոցենտ, ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ

2021 թ. մարտից առ այսօր՝Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ֆինանսների ամբիոնի վարիչ, 2016-2019թթ.՝ ՀՀ ՊԵԿ Ուսումնական կենտրոնի տնօրեն, 2012-2016 թթ.՝ ՀՀ ՊԵԿ նախագահի, ապա ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական, 2011-2012 թթ.՝ ՀՊՏՀ հանրային ֆինանսների ամբիոնի վարիչի պաշտոնակատար, 2010-2011 թթ՝. ՀՊՏՀ գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր, 2008-2009թթ.՝ «ԲՏԱ բանկ» ՓԲԸ, խորհրդի անդամ, 2001-2007թթ.՝ «Արմիմպեքսբանկ» ՓԲԸ, խորհրդի նախագահ, 2001-2017թթ.՝ «Ավագ Սոլյուշնս» ՍՊԸ, գլխավոր խորհրդական, 1999-2000թթ.՝ ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարար, 1997-1999թթ.՝ ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Կանադայում, 1993-1997թթ.՝ ՀՀ ֆինանսների նախարար, 1990-1993թթ.՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ 1985-1990 թթ՝ ՀՀ ԳԱ տնտեսագիտության ինստիտուտ, կրտսեր գիտաշխատող, գիտաշխատող, ավագ գիտաշխատող

Սերգեյ Սուքիասյան

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,54 հրապարակումների հեղինակ, 1986թ.-ից աշխատում է ՀՊՏՀ-ում:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ

Վահան Գևուշի Բաղդասարյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, 2005 թվականից առ այսօր՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, «Ֆինանսներ» ամբիոն, տ.գ.թ., դոցենտ, 2008-2013 թթ.՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան, ֆինանսական ֆակուլտետ, դեկանի տեղակալ:

Արմինե Վոլոդյայի Ներսիսյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, 2005-2006թթ.՝ Մոնթե Մելքոնյանի անվան համալսարան, դասախոս, 2006-2008թթ.՝ Կրթության միջազգային ակադեմիա, դասախոս, 2008թ.՝ ՀՊՏՀ «Ֆինանսներ և վարկ» ամբիոն, ասիստենտ, 2012թ.՝ ՀՊՏՀ «Հանրային ֆինանսներ» ամբիոն, դոցենտ, 2016 թ. մինչ օրս՝ ՀՊՏՀ «Ֆինանսներ» ամբիոն, դոցենտ:

Կարինե Արմենի Միքայելյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, 1997–2009 թթ.՝ ԵրՊՏԻ, «Ֆինանսներ և վարկ» ամբիոն, ասիստենտ 2009 թվականից մինչ օրս՝ ՀՊՏՀ, «Ֆինանսներ» ամբիոն, դոցենտ:

ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄ



Արմինե Վաղարշակի Սչանյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, 2003-2006 թթ. դասախոս, 2005-2006 թթ. ԵՈԳ-1 «Գնոմոն» ԲԲԸ՝ տնտեսագետ, 2006 թվականից առ այսօր՝ ՀՊՏՀ, ներկայում՝ ֆինանսների ամբիոնի դոցենտ

Նարգիզ Ռոբերտի Սուղյան

տնտեսագիտության թեկնածու, 2005-2011թթ. ՀՀ ԿԱ ՊԵԿ, 2010թ.-ից առ այսօր ՀՊՏՀ Ֆինանսների ամբիոն:

Հովիկ Հրաչիկի Գրիգորյան

LinkedIn հարթակում անձնական էջի **հղումը**

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, 2019 թվականից՝ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի դեկան Եվրոպական համալսարանում, 2015-2019 թթ.՝ «Բեթքոնստրակտ» ընկերությունում մանրածախ վաճառքի սպասարկման բաժնի ղեկավար, 2008-2011 թթ.՝ ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերով նախարարության «Երիտասարդական միջոցառումների կազմակերպման կենտրոն»ե ՊՈԱԿ-ի մոնիթորինգի և վերլուծության բաժնում առաջատար մասնագետ, 05.2011-08.2011 թթ.՝ "Արարատ FM" ռադիոընկերության տնտեսագետ, 08.2011-03.2012 թթ.՝ ՀՀ ԿԱ «Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի խորհրդական

ԳՈՐԾԸՆԿԵՐ-ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

TAX SERVICE OF THE REPUBLIC OF ARMENIA

НАЛОГОВАЯ СЛУЖБА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Որպես կրթական ծրագրի շրջանավարտի գործունեության բնագավառ կարող են լինել.

- Պետական ֆինանսները,
- Համայնքային ֆինանսները,
- Հանրային ծառայություններ մատուցող պետական և համայնքային հիմնադրամները(ՊՈԱԿ-ները, այլ կազմակերպությունները) որոնք հիմնականում ֆինանսավորվում են ՀՀ համախմբված բյուջեի միջոցներից:

Շրջանավարտները կարող են աշխատել և զբաղեցնել ֆինանսական ոլորտին առնչվող տարբեր պաշտոններ և աշխատել.

- ՀՀ ֆինանսների նախարարությունում,
- ՀՀ պետական եկամուտների կոմիտեում
- ՀՀ Կառավարության և Ազգային ժողովի աշխատակազմերում, համապատասխան նախարարություններում, գերատեսչություններում, կոմիտեներում և այլ մարմիններում, որոնք առնչվում են հարկաբյուջետային քաղաքականությանը, պետական բյուջեի կազմմանը ,կատարմանը և այդ գործընթացների վերահսկողությանը
- ՀՀ Հաշվեքննիչ Պալատում,
- ՀՀ համայնքներում, համայնքապետարանների ֆինանսական բաժիններում և այլն:

Ողջույն, ես Սոնան եմ:

Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի բակալավրիատը, այնուհետև նույն ֆակուլտետի «Հանրային ֆինանսներ» մասնագիտացմամբ մագիստրատուրան: ՀՊՏՀ-ն իմ կյանքում նոր էջ բացեց ի շնորհիվ համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի, որի արդյունքում ոչ միայն մասնագիտացել եմ, այլ նաև ձեռք բերել մրցունակ ու կայացած մասնագետին բնորոշ հատկանիշներ:

Ներկայումս աշխատում եմ «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ում՝ նպատակ ունենալով դառնալ մրցունակ մասնագետ ֆինանսական ոլորտում: Հպարտ եմ, և շնորհակալ, որ հանդիսացել եմ ՀՊՏՀ ուսանող...

Ողջույն, ես Արևիկն եմ:

Գերազանցությամբ ավարտել եմ ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի բակալավրիատը՝ արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում մասնագիտությամբ, այնուհետև հանրային ֆինանսներ մասնագիտության մագիստրատուրան, որի ընթացքում մեկ կիսամյակ սովորել եմ Գերմանիայում: Համալսարանի տված կրթության շնորհիվ ինձ աշխատաշուկայում մշտապես զգացել եմ մրցունակ, քանի որ դասավանդել են ոլորտի առաջատար մասնագետները:

ՀՊՏՀ-ն տվել է թե՛ տեսական, թե՛ գործնական գիտելիքներ, բայց որ ամենակարևորն է սովորեցրել է մտածել ինչպես տնտեսագետ: **Այժմ աշխատում եմ ՀՀ վարչապետի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչությունում**, **որպես փորձագետ**, և շատ ուրախ եմ, որ կարողանում եմ գիտելիքներս ծառայեցնել ի շահ հանրությանը: